«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տվյալ առարկայի դասավանդման գործընթացում

Առարկա՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Մուրադյան Աննա Ռոբերտի

Ուսումնական հաստատություն՝ «Երևանի Դ. Հովսեփյանի անվան հ. 191 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ – 2023

Բովանդակություն

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2.ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

3.ԲԱՋՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

4.ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

5.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

6.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Այսօր դպրոցում դասերը կազմակերպվում են առանձին առարկաներից: Ուսուցման այս ձևը այդքան արդյունավետ չէ, քան ինտեգրված ուսուցումը: Այսպիսի ուսուցումը ձևավորում և զարգացնում է անձնավորության գիտակցությունը:

Ինտեգրված դասն իր մեջ ներառում է միանգամից մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցում,որի շնորհիվ զարգանում է բազմաբնույթ մտածողությունը:Կարևորվում է ոչ միայն աշակերտների,այլև ուսուցիչների մասնագիտական և որակական կարողությունները:

Ժամանակակից նորարարական մանկավարժության խնդիրները նպաստում են ուսուցման գործընթացի կատարելագործմանը: Ինտեգրված ուսուցման խնդիրը ոչ միայն մի քանի գիտությունների ուսսումնասիրության ընդհանուր տիրույթների ցուցադրումն է,այլև դրանց կապի միջոցով շրջակա աշխարհի միասնուկանության ցուցադրումը:

Պետք է ուսումնասիրել տարրական դասարանների ծրագրային նյութերը համագործակցել, միավորել տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծել միջառարկայական կապերով հարուստ դասեր:

Ընտրել ճանապարհներ բարձրացնելու սովորողների հետաքրքրությունը այս կամ այն առարկայի հանդեպ,ներկայացնել սեփական փորձը, մշակել քայլաշար՝ սովորողի բազմակողմանի զարգացման, ինքնահաստատման համար:Ուսուցումը դարձնել աշխատանքային գործընթաց, հակառակ դեպքում փոքր տարիքից կսերմանվի ծուլություն և անպատասխանատվություն:

Արդի մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը նպաստում է, որ սովորողը դառնա բազմակողմանի զարգացած, կիրթ, դաստիարակված, ունենա իր սեփական դիրքորոշումն ու արժեքային համակարգը:

Ինտեգրացված ուսուցում, միջառարկայական կապերի անհրաժեշտություն

Մեզ շրջապատող աշխարհում բոլոր առարկաներն ու երևույթները գտվում են անխզելի կապերի մեջ:

Երեխան աշխարհն ընկալում է, թափանցում նրա էության մեջ, հասկանում՝աչքի առջև ունենալով ամբողջությունը:Տարրական դասարանների հիմքում ընկած է աշխարհը միասնականության, իրական ամբողջության մեջ ընկալելու սկզբունքները,որը ծնել է միջառարկայական կապերի օգտագործման անհրաժեշտությունը: Այն հնարավորություն է տալիս բազմառարկայության պայմաններում գտնել տարբեր ուսումնական առարկաների միջև եղած կապերն ու առնչությունները:

Տարրական դասարաններում միջառարկայական կապերի ճիշտ, բազմակողմանի ու արդյունավետ օգտագործումը դրական ազդեցություն է ունենում, եթե բոլոր առակաները դասավանդում է դասվարը: Ցավոք սրտի վերջին տարիներին կան առարկաներ , որ դասավանդում են մասնագետները և հաշվի չեն առնվում այդ տարիքի սովորողների տարիքային առանձնահատկությունները: Ինձ թվում է շատ դասվարներ համակարծիք են ինձ հետ: Այդ տարիքի տարբեր առարկաների ծրագրային նյութերը փոխկապակցված են և ըստ իս, ճիշտ կլինի, որ առարկաները դասավանդի միայն դասվարը, որովհետև նա գիտի, թե որ առարկայից սովորողների գիտելիքներն ու կարողությունները ինչ մակարդակի վրա են, ինչից ինչքան կարող է օգտագործել:Միջառարկայական կապերի արդյունավետությունը կախված է նաև տվյալ դասվարից, ով պետք է ունենա բարձր, բազմակողմանի ընդհանուր զարգացում՝ տարբեր գիտություններից, արվեստներից և այլ ճանաչողական բնագավառներից:

Օգտագործելով միջառարկայական կապերը, անցկացվում է ինտեգրված ուսուցում:

Ի՞նչ է ինտեգրված ուսուցումը:Դա ուսուցում է բազմաբնույթ մտածողության, կարողությունների, հմտությունների, բազմապիսի ուսումնա կան առարկաների օգտագործմամբ: Բազմաբնույթ մտածողությունը համարվում է ինտեգրացված ուսուցման հիմքը, որն ունի շարունակական, հաջորդական բնույթ:

Ժամանակակից մանկավարժության մեջ տարբերակում են ինտեգրացված կամ միավորված ուսումնական ծրագրերի 3 տեսակ:

1. Միջառարկայական - հենվում է նույն թեման ներկայացնող առանձին առարկաների վրա և կենտրոնում դրվում է այն ընդհանուրը,որը գտնվում է ուսումնական ծրագրի մյուս կողմում:
2. Բազմառարկայական- հենվում է նույն թեման ներկայացնող առանձին առարկաների վրա և կենտրոնում դրվում են առանձին գիտություններ/ուսումնական նյութեր,որոնք միավորում են ընդհանուր թեմայի շուրջ:
3. Անդրառարկայական- հենվում է նույն թեման ներկայացնող առանձին առարկաների վրա և կենտրոնում դրվում են առանձին առարկաների ծրագրային նյութից դուրս թեմաներ:

Բազմաբնույթ մտածողություն

Ինտեգրված ուսուցման հիմքը հանդիսանում է բազմաբնույթ մտածողությունը:

Ըստ Հ. Գարդների առաջադրած բազմաբնույթ մտածողության ձևերն են՝

- լեզվական
- տրամաբանական
- տեսողական
- մատնաշարժողական
- երաժշտական
- միջանձնային
- ներանձնային

Հ. Գարդները առաջարկում է օգտագործել ոչ թե մտածողություններից մեկը,այլ՝միաժամանակ բոլորը:

Ավելի ուշ Գարդներն ավելացրել է՝

- բնագիտական
- իրական առարկայական
- հոգևոր մտածողությունը և այլն:

Հակիրճ ներկայացնեմ բազմաբնույթ մտածողության տարբերակումն ըստ Հ. Գարդների :

- *Լեզվական խոսքային մտածողությունը* ենթադրում է խոսքը, լեզուն, որպես միտքարտահայտելու, ուրիշներին հասկանալու, հաղորդակցվելու միջոց, կիրառելու կարողություն: Վերջինս դրսևորվում է լեզուն և խոսքը,որպես հաղորդակցվելու միջոց օգտագործելու ձևով:
- *Տեսողական - տարածական մտածողությունը* ենթադրում է երևույթների զննական ընկալում և զննական գաղափարներով կառավարվելու կարողություն:Նման մտածողությոն ունեցողների համար հեշտ է իրենց զննական գաղափարները սխեմաների, դիագրամների միջոցով ներկայացնելը:
- *Տրամաբանական-մաթեմատիկական մտածողությունը՝* ենթադրում է տրամաբանական մտածողության, թվերի առավել արդյունավետ օգտագործման, խնդիրների գիտական լուծման, իրերի ու գաղափարների միջև եղած կապերն ընկալելու կարողություն:
- *Երաժշտական մտածողությունը՝* ենթադրում է երաժշտությունը որպես արտահայտման միջոցի օգտագործում:Երաժշտական մտածողությամբ օժտված մարդիկ զգայուն են ռիթմի, մեղեդու, հարմոնիայի նկատմամբ:
- *Մարմնաշարժողական մտածողությունը* ենթադրում է սեփական մարմնի օգնությամբ կամ իր պատրաստած առարկաների միջոցով իմաստի արտահայտման զանազան իրեր կառուցելու,ստեղծելու կարողություն:
- *Միջանձնային մտածողությունը* ենթադրում է ուրիշ մարդկանց հետ շփման և նրանց զգացմունքները հասկանալու կարողություն:
- *Ներանձնային մտածողությունը* ենթադրում է ինքնաճանաչողական՝ ներառյալ սեփական մտորումները, վարքի դրդապատճառները, նպատակները, զգացմունքներն ու գաղափարները և դրանց հիման վրա նոր մտքեր կառուցելու, գաղափարներ զարգացնելու կարողություն:
- *Բնագիտական մտածողությունը* հնարավորություն է ստեղծում բնության տարրերը տեսնել փոխկապակցության մեջ:Կիրառելով մտածողության այս ձևը՝ երեխաները կարող են ստույգ տեղեկություններ կազմել արտաքին աշխարհի մասին:

- *Հոգևոր մտածողությունը՝* ի հակադրություն բնական աշխարհի, պարտադրում է առաջ քաշել հոգևոր աշխարհը և առկա բացերով լրացնել բնական աշխարհը:Հոգու մասին խոսելիս օգտագործվում են հոգևոր զգացմունք և կրոնական օժտվածություն եզրույթները, որոնք հակադրվում են գիտությանը և չեն օգտագործվում ակադեմիական աշխարհում:Մեզանից շատերը մարդու մեջ ճանաչում են մարմինը, գիտակցությունը, բայց ոչ հոգին:Գարդները համարում է, որ հոգևոր մատծողությունը պետք չէ դիտարկել կրոնական տեսանկյունից, այլ դիտել որպես գոյություն ունեցող բնության բազմապիսի հարցերի ամբողջություն:
- *Իրական/առարկայական/մտածողությունը* ինքն իրեն տիեզերական աշխարհի հետ կապի մեջ տեսնելու կարողություն է, ինչպես զգացմունքներն արվեստի աշխարհում: Գարդների տեսության առավելությունն այն է, որ ստեղծել է բազմաբնույթ մտածողության կուռ համակարգ և տվել է տեսության խոր, գիտական, հոգեբանամանկավարժական հիմնավորում: Այդ միասնությունը ներկայցրել է «ԲՄպիցցայի» տեսքով, այլ աղբյուրներում՝ տորթի, իսկ տարրական դա սարաններում անվանել է « ԲՄ արև» կամ «ԲՄ ծաղիկ»:

Ուսուցման գործընթացում մեծ տեղ է գրավում ուսուցչի ստեղծագործական նախաձեռնության ճիշտ օգտագործումը:

Քննադատական մտածողության նշանակությունը ինտեգրված ուսուցման ընթացքում

Բացի Հ. Գարդների նշված ԲՄ տեսակներից կարևոր եմ համարում նաև քննադատական մտածողությունը:

Քննադատական մտածողությունը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները:

- Ուսուցիչը հանդիսանում է օրինակ սովորողի համար: Սովորողը հետևում է ոչ միայն ուոսուցչի ասածին,այլև նրա արածին: Ուսուցչի օրինակին հետևելով,սովորողները ձեռք են բերում գիտելիքները կիրառելու, իմացածը համակարգելու և համապատասխան եզրահանգումներ անելու կարողություններ

- Քննադատական մտածողությունը նպաստում է՝
- ակտիվացնել սովորողի մտածողությունը
- հետաքրքիր քննարկումներ ծավալել
- սովորողներին ներգրավել ուսման գործընթացի մեջ
- օգնում է գտնել խնդրի սեփական լուծումները՝ տրամաբանությամբ և հիմնավորելով, որ թեմատիկ միավորը ինտեգրված ուսուցման գլխավոր մաս է:

Այն ուսուցում իրականացնող համակարգված պլան է, որն օգնում է վերլուծել, արժևորել, գնահատել սեփական աշխատանքը:

Թեմատիկ միավորները լինում են առարկայական և ինտեգրված:Դրանք զարգացնում են ուսուցչի ստեղծագործական կարողությունները,տեսական և գործնական հմտությունները, ձևավորում ուսուցիչ-աշակերտ գործարար համագործակցություն, նպաստում արտադասարանական, արտադպրոցական և դաստիարակչական աշխատաքների արդյունավետության բարձրացմանը,ըստ սովորողների կարողությունների՝ շերտավորված ուսուման իրականացմանը:

Ինտեգրված թեմատիկ միավոր ստեղծելիս,պետք է որոշել միավորի տիրույթը, այսինքն՝ «ինչը որքան» պետք է սովորեցնել: Հարկավոր է հաշվի առնել նաև թեմայում ներառված տեղեկատվության հաջորդականությունն ու շարունակականությունը, ինտեգրվող նյութը կապել սովորողի անձնական փորձին ու միջավայրին, օգնել աշակերտին ստեղծելու իմաստալից պատկեր և հաստատել միջառարկայական կապեր:

Ինտեգրացված դասերը տարրական դպրոցում

Ուսուցիչների փորձը համոզում է, որ երեխաները նոր տեղեկատվությունն ավելի լավ են ընկալում և մտապահում, եթե այն հենվում է իրենց փորձին կամ գիտելիքներին:Սովորողներն ավելի ուշադրություն են դրսևորում, երբ մեջբերվում են այլ ուսումնական առարկաներից ստացած գիտելիքներն ու կարողությունները:Ուսուցչի համար ինտեգրված դասը ոչ թե նպատակ է, այլ իր սեփական ստեղծագործական անձի ձրավորման միջոց, շփում մտածողութ յան նոր տեսակի, նոր տեխնոլոգիաների կիրառման իրականացման մեծ դաշտ:

Ինտեգրված դասերին սովորողները հնարավորություն են ստանում ամեն ինչ շոշափելու, զննելու, առաջացող հարցերին ինքնուրույն պատասխանելու:Հենց այս ճանապարհով երեխայի մտավոր ակտիվությունը, որակները և ունակությունները ձևավորվում են բազմաբնույթ գործունեության մեջ:

Տարրական դասարաններում ինտեգրված դասեր կարելի է կազմակերպել՝միա վորելով մայրենիի,մաթեմատիկայի մի շարք թեմաներ:Դասն ավելի բովանդակալից և մատչելի կդառնա մայրենիի և կերպարվեստի կամ մայրենիի և տեխնոլոգիայի, երաժշտության և ֆիզկուլտուրայի ծրագրային որոշ նյութերի ինտեգրման միջոցով:

Թեմատիկ միավորի կիրառումը երկրորդ դասարանում կերպարվեստի դասին

Կերպարվեստը կյանքի հրաշալի ու ինքնատիպ արտացոլումն է:Նկարներ դիտելու և նկարելու միջոցով երեխաների մեջ մշակվում է գեղարվեստական ճաշակ,արթնանում է սեր գեղեցիկի նկատմամբ:Նկարներ ճանաչելն ու ընկալելը նրանց համար գեղեցիկի աշխարհը տանող մի ճանապարհ է,որըկարող է դառնալ յուրաքանչյուրի հոգեկան աշխարհի գանձարանը:

Նկարելուն մեծ տեղ է տրվում մայրենիի, մաթեմատիկայի ժամերին:Դրանք նպաստում են ն՝ գրաֆիկական պատկերացումների, և՛ երևակայության զարգացմանը: Երեխան աշխարհը ընկալում է խոսքի, երաժշտության, նկարների և այլ միջոցների շնորհիվ: Այդ պատճառով էլ կերպարվեստն ու երաժշտությունը համարվում են ուսումնական առարկաների ծրագրերում ընդգրկված անբաժանելի բաղադրամաս:

Վերոհիշյալ սկզբունքների հիման վրա մշակել ու կիրառել եմ «Կերպարվեստ», «Մայրենի», «Երաժշտություն» առարկաներն ընդգրկող խմբի «Աշուն» թեմատիկ միավորը:

2-րդ դասարան

Ինտեգրված թեմատիկ միավոր՝ «Աշուն»

Առաջնային առարկա՝ «Կերպարվեստ »

Երկրորդային առարկայախումբ՝

- մայրենի
- երաժշտություն
- թատրոն

Դասաշարի տևողությունը՝ 5 դասաժամ

նախապատրաստական-3ժամ

ամփոփիչ դաս -2ժամ

Դասաշարի նպատակը

Աշակերտների մեջ ձևավորել՝

- սեր և հետաքրքրություն բնության նկատմամբ
- միշտ օգտագործել բնության բարիքները

  Զարգացնել

- ստեղծագործական մտածողություն
- գեղարվեստական ճաշակ
- համագործակցային աշխատանքի կարողություններ

Աշակերտներին հնարավորություն է ընձեռնվում ինքնադրսևորման համար

Դասաշարի վերջում աշակերտները պետք է.

- Ճանաչեն բնության կապը մարդու հետ
- Իմանան հանելուկներ,բանաստեղծություններ աշնան մասին

  Կարողանան.

- Գեղեցիկ խոսքերով նկարագրել տարվա եղանակները
- Դասական երաժշտության ներքո զգացածը ներկայացնել գույներով
- Պատկերել աշնանային տրամադրություն
- Մեկնաբանել նկարներ

Կահավորումը

- Նստարանները շրջանաձև դասավորված են խմբային աշխատանքի համար:
- Դասասենյակը կահավորված է չորացած տերևներով, աշնանային նկարներով, էլեկտրոնային գրատախտակով:

- Նախատեսվում է օգտագործելթուղթ, գունավոր մատիտներ, ռետին, ջրաներկ, վրձին բամբակ, գունավոր ստվերներ, գունավոր ավազ:

Դասի ընթացքը

Խթանման փուլում օգտագործվում է մտագրոհ մեթոդը:Սովորողներին տրվում են հարցեր,որոնց պատասխանների առաջին տառերի տակ թաքնված է «Աշուն» բառը:Այնուհետև երեխաներին առաջարկվում է ասել այդ բառի հետ առնչվող բառեր:Բառերը գրվում են էլեկտրոնային գրատախտակին:Սովորողներին տրվում են բառեր, որպեսզի գուշակեն այդ բառերից յուրաքանչյուրը տարվա որ եղանակն է բնութագրում:

Այնուհետև սովորողները նկարագրում են տարվա եղանակները, որի միջոցով ընդհանրացվումեն նրանց գիտելիքները՝ տարվաեղանակների մասին, տարբերությունները՝ գույներով, տրամադրությամբ, նկարագրությամբ:

Աշակերտների կողմից նշվում է մարդու կապը բնության հետ, ներկայացնում են գույներով, բնության երևույթները երաժշտության և խոսքերի միջոցով:

Օրինակ՝ անձրև՝ կաթ-կաթ, կարկուտ՝ ձեռքերով խփում են ոտքերին

քամի՝վու՛ ու՛ու՛...

այգեկութ՝ երգելով և ձեռքի շարժումներով

Իմաստի ընակալման փուլ

Ուսուցիչը միացնում է Վիվալդի «Տարվա եղանակները»: Երեխաները «Աշուն» հատվածը նկարագրում են աշնան երեք փուլերով՝ աշնանամուտ, այգեկութ, տերևաթափ:

Դասարանը բաժանվում է խմբերի:

Առաջին խումբը ներկայացնում է աշնանամուտը՝ բանաստեղծությամբ, գեղեցիկ նկարագրությամբ: Երկրորդ խումբը՝ այգեկութը՝ թատերախաղով: Հայտնվում է «Աշուն» տատիկը և խնդրում է բեռնաթափել:Սովորողները օգնում են տատիկին:Տատիկը նկատում է այգեպանին, ով հպարտ կանգնած հիանում էր պտուղներով,որոնց մեջ դրել էր իր ուժն ու կորովը: Տատիկը մրգերը դնում է սեղանին որպես բնօրինակ:

Երրորդ խումբը նկարագրում է Աշուն տատիկին և համեմատում մարդու հետ՝ մազերի ճերմակելը, մազաթափությունը:Խորշերի առաջացումը դեմքին և ձեռքերին համեմատում են տերևաթափի և տերևների չորացման հետ:

Չորրորդ խումբը թատերախաղով ներկայացնում է տխուր տերևին, որ քամու ապտակից պոկվել, ընկել էր գետնին:Տերևը մտածում էր որ ինքը ոչ մեկի պիտանի չէ:

Հայտնվում է աղջիկը:Նա գերվում է տերևի գեղեցկությամբ,որոշում է տանել և օգտագործել գեղեցիկ աշխատանքների մեջ:

Կշռադատման փուլում կիրառվեց քառաբաժան մեթոդը:

Ինչ տեսան	Ինչ զգացին
Ինչ լսեցին	Ինչ հասկացան

Խմբային աշխատանքի վերջում առաջարկվեց աշունը ներկայացնել գույներով:Յուրաքանչյուրն աշխատանքի ընթացքում օգտագործվեց տարբեր նյութեր:

Հաջորդ դասաժամին կիրառվեց պատկերասրահ մեթոդը:Սովորողները ներկայացրեցին իրենց աշխատանքները:Ամփոփիչ երկու դասաժամերն անցան հետաքրքիր,բովանդակալից:Նրանք տեղափոխվել էին աշնանային գունագեղ աշխարհ:

Երրորդ դասարանում անցկացրեցի «Ճանաչի՞ր բնությունը և մի՞ վնասիր ինքդ քեզ» Հետազոտական աշխատանքը «Ես և շրջակա» առարկայից, որն ընդգրկում էր մարդու օրգան համակարգերի, առողջ ապրելակերպի, սննդի, առողջության պահպանման հագեցած տեղեկատվություններ, գործնական աշխատանքներ, համահունչ սահիկաշարեր:Ինտեգրվել էին մայրենի, քիմիա, երաշտություն առարկաները: Ներկայացրեցին դերային խաղով՝հաղորդաշարի ձևաչափով: Սովորողները դարձել էին բանիմաց «բժիշկներ», խորհրդատուներ, ովքեր պատասխանատվությամբ էին վերաբերվում:Նրանց կողմից ներկայացվեցին օրգան համակարգերը՝ համապատասխան սահիկաշարով, տրվեցին խորհուրդներ՝որոշ հիվանդություններ կանխարգելելու նպատակով:

Սովորողների մի խումբը ցուցադրեց առաջին բուժօգնության պարզագույն օրինակներ:Մյուս խումբը ներկայացրեց առողջ ապրելակերպի նշանակությունը և խոսեց առողջ սննդի մասին՝ վիտամիններ, ածխաջրեր,սպիտակուցներ, ճարպեր, հանքային նյութեր:

Հաղորդաշարին հյուր էր քիմիայի ուսուցչուհին, ով ցուցադրեց փորձ:Այդ փորձը հետաքրքրություն առաջացրեց սովորողների մոտ:

Փոքրիկ խոհարարները պատրաստեցին երկու աղցան իրենց բաղադրատոմսերով: Սովորողները նշեցին, որ մարդը՝ ճանաչելով շրջակա աշխարհը, պետք է պահի,պահպանի այն ամենը, ինչ ի վերուստ իրեն պարգևել է մայր բնությունը:Վերջում կատարեցին մի երգ՝ բնության պահպանության մասին, որի հեղինակ է դպրոցի կազմակերպիչը՝ Ա. Ալավերդյանը:

Բնությունը մի հրաշք է,
Որի զավակներն ենք մենք:
Բնությունը մի հրաշք է,
Որ պիտի լավ ճանաչենք:
Ճանաչենք կենդանիներին,
Փորձենք. նրանց պաշտպանել,
Ճանաչենք անթիվ բույսերը,
Խնամենք ու աճեցնենք:
Կրկ. Երկրագունդն է պտտվում,
Տարիներն են գլորվում
Բնության հրաշք գրկում:
Մերթ ձնեռ է,մերթ գարուն է,
Մերթ ամառ է,մերթ աշուն,
Բնության երևույթները
Խենթացնում են,խենթացնում
Մեկ ճերմակն է երկրի տերը,
Մեկ էլ՝ կանաչն է իշխում

Եզրակացություն

Ինտեգրված ուսուցումը ես շատ եմ կարևորում՝ուսումնասիրելով գիտական մոտեցումները և ունենալով իմ սեփական փորձը:Այն օգնում է բարձրացնել կրթության որակը:Ցանկացած ինտեգրված դասին դուրս ես գալիս առարկայի շրջանակներից,որի շնորհիվ ընդլայնվում է սովորողների մտահորիզոնը, ձևավորվում տրամաբանական, ստեղծագործական, հաղորդակցման, ինքնուրույն գործունեության, համագործակցային կարողություններ և հմտություններ: Ձևավորվում է ուսումնական նյութի բազմաշերտ ընկալում, գիտական աշխարհայացքի ձևավորում:

Այսպիսի դասերը օգնում են դպրոցի հաջորդ աստիճաններում բնագիտական առարկաներին առավել հեշտությամբ ընկալելուն և յուրացնելուն: Ավելի պատասխանատվությամբ են վերաբերվում, դառնում են համարձակ, ուսուցիչներին համարում են իրենց մտերիմ: Սովորողները դառնում են ինքնուրույն որոշում կայացողներ, որն ամբողջ կյանքի ընթացքում օգնում է հաղթահարելու խոչընդոտները, կատարելագործվելու: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտագործություններով: Ուսուցչին հնարավորություն է տրվում հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար նոր տեղեկություններ, իսկ աշակերտին տալիս է ինքնակրթվելու հնարավորություն:Լավ կրթություն նշանակում է ունենալ կայուն գիտելիքներ, հմտություն, դիրքորոշում, արժեքային համակարգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Աստվածատրյան, Ս.Վարդումյան, Ա.Արնաուդյան, Ի. Օհանյան, Ռ.Պետրոսյան «Բազմաբնույթ մտածողության կիրառումը ուսուցման վաղ շրջանում» Երևան2001
2. Նախաշավիղ 4.2011
3. Հ.Գարդներ «Բազմաբնույթ մտածողություն»
4. Ինտեգրված թեմատիկ միավորներ ԱՅՐԵՔՍ, Եր.2002
5. hy.m.wikipedia.org https://hy.m.wikipedia.org>uh`ki